



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության

թեման՝ <<[Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ](#)>>

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Միսկարյան Մելանյա

Ուսումնական հաստատություն՝ «Ալավերդու Հովհ. Թումանյանի
անվան թիվ 2 հիմնական դպրոց»

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Ընտանիքի Հոգեբանություն, Կոնֆլիկտներ.....	4
Ընտանիքի Հոգեբանություն.....	5
Հավանական Կոնֆլիկտների Առաջացման Պատճառները.....	6
Ընտանիքի Ճգնաժամային Շրջանները	12
Երեխան Ոչ Լիարժեք Ընտանիքում.....	13
Ընտանեկան Կոնֆլիկտի Տեսակները և Դրանց Հաղթահարելու Լուծումները.....	15
Ինչպես Լուծել Խնդիրը	18
Եզրակացություն.....	20
Օգտագործված գրականության ցանկ.....	21

Ներածություն

Երբ երեխան անուշադիր է դասերին, անտարբեր է դասարանում կատարվածին, դասամիջոցներին աշխույժ չի վազվզում և չեն փայլում աչուկները, ուրեմն նրան անհանգստացնող բան կա:

Երբ երեխան անընդհատ ուշադրություն է ուզում, տալիս է հարցեր, բայց պատասխանները նրան հետաքրքիր չեն, երբ ընկերների և շրջապատի նկատմամբ անհասկանալի թշնամանք է տածում, ուրեմն նրան անհանգստացնող բա կա:

Նման դեպքերում իմ արդեն բավական աշխատանքային փորձն ինձ հուշում է, որ հնարավոր է, որ երեխայի ընտանիքում կան անձնային կամ այլ խնդիրներ: Իզուր չէ, որ ասում են՝ «Երեխան ընտանիքի հայելին է»:

Ուստի հարկ է առաջանում կապ պահպանել ընտանիքի հետ, հասկանալ խորքային պատճառները, փոքրացնել կամ վերացնել դրանց ազդեցությունը երեխայի հոգեկան և մտավոր հնարավորությունների վրա:

Չկա ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չլինեն կոնֆլիկտներ (տարաձայնություններ): Գուցե իսկապես պատահական չէ մեծերի կողմից պարադոքսի նման հնչող այն խոսքը, որ եթե ընտանիքում չկան վիճաբանություններ, ապա այնտեղ ինչ-որ բան կարգին չէ: Ընտանեկան կոնֆլիկտները հնարավորություն են ստեղծում թուլացնել լարված մթնոլորտը, հասկանալ մեր կողքին ապրող մարդկանց տեսակետներն ու համոզմունքները: Ի վերջո կոնֆլիկտները նաև կարելի է դիտարկել իբրև «նուրբ ազդակ», որի միջոցով ստուգվում է ներընտանեկան կայունությունը և ի հայտ եկող խնդիրները համատեղ լուծելու կարողության ու ցանկության առկայությունը: Սակայն առավել զգուշավոր պետք է լինեն այն ընտանիքները, որտեղ

կան մարդիկ ովքեր նոր են ծանոթանում կյանքի բազմաթիվ դրսևորումներին և դեռևս մեծ կախվածության մեջ են գտնվում ընտանիքի առավել փորձառու անդամներից: Խոսքն իհարկե երեխաների մասին է, որոնց հոգևոր և ֆիզիկական ճիշտ զարգացումն ու կայունությունը պետք է գերակա նպատակ լինի ընտանիքի բոլոր անդամների համար և ուղենիշ հատկապես ծնողների հարաբերությունները կարգավորելու գործընթացում: Այսպիսով, շատ կարևոր է նախևառաջ հասկանալ ընտանիքի հոգեբանությունը, որից բխում են կոնֆլիկտները ու գտնել ճշգրիտ լուծումներ :

Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Մոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների չորս տեսակ.

Ներանձնային – պետք է նշել, որ այն մարդը, ով ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

Միջանձնային – կոնֆլիկտը ծագում է երկու կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

Անհատական – խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

Միջխմբային – կոնֆլիկտը կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի, նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության դեպքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը)

գ) ներքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում)

ՄԱՍ 1. Ընտանիքի Հոգեբանություն

Ընտանիքի հոգեբանությունը, հոգեբանության այն բաժինն է, որն ուսումնասիրելով էվոլյուցիան ու բնույթը ամուսնության և ընտանեկան հարաբերությունների, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը, նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ: 1960-1970-ական թվականներին ամուսնությունն ու ընտանիքն հետազոտությունների առարկա դարձան մասնագետների, այդ թվում նաև հոգեբանների կողմից: Սկզբում ընտանիքը ուսումնասիրվել է հոգեկան հիվանդությունների հետ կապված կանխարգելումը կամ ընտանիքի դաստիարակության թերությունները: Ավելի ուշ ընտանիքի հոգեբանության տեսողական դաշտում աչքի ընկան այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ պատմությունը և էվոլյուցիայի ամուսնության ձևը, ընտանեկան կյանքի ցիկլը, ամուսինների փոխհարաբերությունները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները: Ընտանեկան հոգեբանության տիրույթում է գտնվում ընտանիքում սեռական հարաբերությունների հարցը: Արդի ընտանիքի առաջացումը և հետագա գոյատևումը հետազոտողներն անվանում են «զարգացում» և ապա փորձում առանձնացնել դրա որոշակի փուլեր: Վիճելի համարելով ընտանիքի զարգացման անլուծելի խնդրի մասին տարբեր փուլերում առանձնացվող տեսակետը գտնում ենք, որ այն լուրջ վերանայման կարիք ունի:

ՄԱՍ 2. Հավանական Կոնֆլիկտների Առաջացման Պատճառները

Կոնֆլիկտի առաջացման և զարգացման գործում չափազանց մեծ է անձնային գործոնը՝ անձի հոգեֆիզիոլոգիական հոգեբանական էթիկական և վարքային առանձնահատկությունները: Անձի բնավորության գծերը, նրա սովորությունները, զգացմունքները կամքի հետաքրքրությունները և այլ որակներ հատկապես կարևորում են միջանձնային կոնֆլիկտների¹ և կազմակերպության ներսում կոնֆլիկտների ժամանակ: Կոնֆլիկտի առաջացման առումով կարելի է առանձնացնել անձի հետևյալ հիմնական տարրերը.

- Հոգեբանական դոմինանտներ
- Բնավորություն
- Ոչ ադեկվատ ընկալումներ
- Վարքի ոճերը և էթիկայի նորմերը

Անձի հոգեբանական դոմինանտներ. Անձի հոգեբանական դոմինանտներն են արժեքային կողմնորոշումները, նպատակները, հետաքրքրությունները, պահանջմունքները: Դրանք բոլորը ունեն ներքին փոխկապակցվածություն և բխում են մեկը մյուսից: Արժեքային կողմնորոշումները ձևավորում են սոցիալականացման ընթացքում և արտահայտվում են բարոյական, գաղափարախոսական, քաղաքական և այլ սկզբունքներում որոնց հիման վրա հակամարտության սուբյեկտը գնահատում է կոնֆլիկտի բնույթը և կառուցում է իր վարքը այդ իրավիճակում: Արժեքային կողմնորոշման հիման վրա տեղի են ունենում կոնֆլիկտի օբյեկտների առանձնացում և տարբերում ըստ իրենց նշանակության հետ կապված կրոնական և աշխարհիկ մարդու վարքագիծը կարող է բացարձակ տարբեր լինել: Այնտեղ որտեղ մեկը կձգտի խուսափել կոնֆլիկտային իրավիճակից՝ առաջնորդվելով <<մի սպանիր>> և <<սիրիր մերձավորիդ>> սկզբունքով մյուսը ընդհակառակը կարող է ագրեսիվ ցուցաբերել դեկավարելով <<ակն ընդ ական>> <<ով մեզ հետ չէ, դեմ է մեզ>> և այլ սկզբունքներով:

¹ <https://hy.wikipedia.org/>

Նպատակն իրենից ներկայացնելով իրավիճակի ավարտված պատկերացումը որոշում է մարդկանց վարքի ուղղվածությունը:

Կոնֆլիկտի կանխագուշակված դրական արդյունքը ձեռք է բերում խթանիչ ուժ և դառնում է նպատակ, սկսում է ուղղորդել հակամարտության սուբյեկտների գործողությունները: Կոնֆլիկտի մասնակիցների հետաքրքրություններն կոնֆլիկտի օբյեկտի գիտակցումն է որպես պահանջմունք: Հետաքրքրությունների հակասությունն է, որ ծնում է կոնֆլիկտ: Եթե օբյեկտը որևէ հետաքրքրություն չի ներկայացնում դրա պատճառով կոնֆլիկտ չի առաջանում: Այսպիսով մարդու վարքի կարգավորումը այդ թվում և կոնֆլիկտային իրականանում է անձի հետաքրքրությունների դրդապատճառների, նպատակների, կողմնորոշումների փոխգործունեության միջոցով:

Անձի բնավորություն. Կոնֆլիկտի² առաջացման զարգացման մեջ մեծ դեր ունի մարդկանց բնավորության տարբերությունները: Կոնֆլիկտի հատկապես կարևոր տարր է բնավորության առանձին գծերի չափազանց արտահայտվողականությունը: Դրանց նշանակման համար Կ. Լեոնհարդը ներմուծել է բնավորության ակցենտուացիա հասկացությունը, այսինքն բնավորության որոշակի շեշտվածություն; Ակցենտավորված անձիք լրացուցիչ դժվարություններ ունեն ուրիշների հետ փոխհարաբերություններում, իսկ որոշ բնավորության գծեր ուղղակիորեն ունեն կոնֆլիկտային ուղղվածություն: Աֆեկտիվ լաբիլ տիպ. Այս տիպի մարդկանց բնորոշ է հուզական վիճակների բարձր դիսպոզիցիոն, նրանք հեշտությամբ են հրճվում ուրախալի իրադարձություններից և վշտանում տխուրներից: Նրանց բնորոշ է բարձր շփվողականությունը, շատախոսությունը նրանք հաճախ են վիճում բայց գործը չեն հասցնում բաց կոնֆլիկտի: Պարանոիկ տիպ. Նման մարդիկ հիշաչար են և վրիժառու:

Հեշտությամբ վիրավորվում են, գերզգայուն են, չափազանց բարձր են գնահատում իրենց ես-ը: Սրանց հիմնական առանձնահատկությունը աֆեկտի հիվանդագին կայունությունն է: Նրանց թվում է, թե շրջապատողները իրենց միշտ վատ են վերաբերում, խանգարում են իրենց գործերին: Դյուրագրգիռ տիպ. Այս մարդիկ

² <https://hy.wikipedia.org/>

իմպուլսիվ են չեն թաքցնում իրենց դժգոհությունը, կոպիտ են բոլորի հանդեպ հաճախակի են վիճում չմտածելով հետևանքների մասին: Ունեն ցածր զարգացած ինտելեկտ: Կոնֆլիկտի ժամանակ չեն սիրում բացատրվել ու միանգամից անցնում են ֆիզիկական միջոցների կիրառման:

Անձի ոչ ադեկվատ ընկալումներ մարդու կողմից ոչ ադեկվատ գնահատումն ու ընկալումը ինչպես ուրիշների այնպես էլ ինքն իրեն նույնպես կոնֆլիկտի առաջացման կարևոր տարր է: Ուրիշների կամ սեփական որակների ցածրացումը կամ բարձրացումը կարող է ծնել ամենատարբեր սխալներ, հակասություններ կամ կոնֆլիկտ: Այս առումով առանձնացվում է տիպիկ սխալներ, որոնք հանգեցնում են ոչ օբյեկտիվ գնահատականների:

Օրեռլի էֆեկտ. Սրա ժամանակ մարդու ներքին բնութագրի մասին եզրակացություններ են անում ելնելով ըստ նրա արտաքին նշանների: Սրա էությունն կայանում է նրանում, որ տեղեկության սակավության պայմաններում մարդու մասին ընդհանուր գնահատողական տպավորությունները տարածվում են նրա արարքների ու անձնային որակների վրա: Օրեռլի էֆեկտը կարող է դրսևորվել դրական և բացասական գնահատականների ձևով: Եթե մարդու առաջին ընդհանուր տպավորությունը բարեհաջող է ապա հետագայում նրա արարքները ևս կվերագնահատվեն դրականորեն, իսկ բացասական պահերը չեն գնահատվի կամ կանտեսվեն: Եվ հակառակը եթե նախնական դրական արարքները չեն գնահատվի կամ նկատվի: Բումերանգի էֆեկտ այն որպես կանոն առաջանում է եթե ինֆորմացիայի աղբյուրի նկատմամբ վստահությունը կորել է, եթե փոխանցվող ինֆորմացիան երկար ժամանակ իրականությանը չի համապատասխանում: Եթե ինֆորմացիան փոխանցող սուբյեկտը հակակրանք է առաջացանում: Այս պայմաններում եթե ինֆորմացիայի աղբյուրը նույնպես ճշմարտություն ասի կարելի է սպասել նրան, որ չեն հավատա: Այսինքն պատեհ ոչ ադեկվատ ինֆորմացիայի աղբյուր նույնիսկ ճշմարտությունը ասի կամ սպասեն որ նրան չեն հավատա: Այսինքն այստեղ ոչ ադեկվատ ընկալումը կապված է տեղեկատուի հանդեպ ունեցած վերաբերմունքից: Սոցիալական կարծրատիպի սխալ. Սոցիալական կարծրատիպը կայուն հեշտացված ձև է: Այն առաջանալով օբյեկտի մասին սահմանափակ ինֆորմացիայի պայմաններում կարող է նաև լինել բացասական դեր

կատարելով ձևավորել սխալ պատկերացում մարդկանց մասին և դժվարացնելով նրանց փոխհարաբերությունները: Նորույթի էֆեկտ. Մարդկանց կողմից անձանոթ մարդուն գնահատելիս և ընկալելիս առավել նշանակալից է համարվում առաջին ինֆորմացիան³ իսկ ծանոթ մարդու դեպքում վերջին այսինքն ավելի թարմ ինֆորմացիան: Տրամաբանական սխալ սրա էությունը անձի որակների հաճախ կրկնվող փոխկապակցվածության մեջ: Օր՝ եթե մարդը ագրեսիվ է նաև ակտիվ է:

Վարքի ոճերի և էթիկայի նորմեր Մարդիկ շփման մեջ են մտնում մշակույթի տարբեր մակարդակներով, սովորույթներով, վարքի կանոններով: Այս տարբերությունները կարող են պայմանավորված լինել բնավորության գծերով կրթությամբ, արժեքային կողմնորոշումներով, կենսավորված այսինքն գործոններով, որոնք կապված են անձի սոցիալականացման գործընթացի հետ: Սակայն շփման մեջ հանդիպում ենք պարզապես դժվար մարդիկ որոնց վարքը անհարմար է շրջապատի համար և որոնք համարվում են կոնֆլիկտի առաջացման բարձր աղբյուրներ: Շփման մեջ դժվար մարդկանց տեսակները առանձնացրել է Լ.Մ. Բոեմսոնը <<ագրեսիվներ>> նրանք անդադար վիրավորում են ուրիշներին, ասում են խայթող խոսքեր և նյարդայնանում են, եթե նրանց չեն լսում: <<Բողոքներ>> նրանք միշտ ինչ-որ բան կգտնեն գանգատվելու համար: Սովորաբար նրանք խնդրի լուծման համար գրեթե ոչինչ չեն անում և չեն ցանկանում պատասխանատվություն վերցնել: Սովորաբար նրանք խնդրի լուծման համար գրեթե ոչինչ չեն անում և չեն ցանկանում պատասխանատվություն վերցնել իրենց վրա: <<Լռակյացներ>> հանգիստ են և քչախոս ոչ մեկը չգիտի թե իրականում ինչ են մտածում, թե ինչ են ցանկանում; <<Գերհամակերպվողներ>> նրանք կհամաձայնվեն ձեզ հետ ամեն ինչում և կխոստանան օգնել ձեզ, սակայն հաճախակի դրանք զուտ խոսքեր են և չեն արդարացնում իրենց հետ կապված հույսերը: <<Մշտական վստահություններ>> միշտ կանխագուշակում են անհաջողության գործում և աշխատում են ոչ ասել քանի որ սովորաբար կարծում են, որ սովորաբար որոշվածից ոչինչ չի ստացվի: <<Ամենագետներ>> իրենց բոլորից բարձր են դասում քանի որ կարծում են, որ աշխարհում ամեն ինչ գիտեն: Ըստ այդմ նրանք ուզում են նաև, որ այդ կատարելության

³ Շնեյդեր, Ընտանիքի հոգեբանություն 1999

մասին մյուսները նույնպես իմանան: Կոնֆլիկտի կարևոր տարր է նաև մարդկանց էթիկական արժեքները և վարքի նորմերը, որոնք մարդկային հարաբերությունների մշտական և հիմնական կարգավորիչներն են, որտեղ արտահայտված են պատկերացումներ չարի և բարու, արդարության և անարդարության մարդկանց կարգապահ և սխալ լինելու մասին:

Մտնելով մյուսների հետ շփման մեջ յուրաքանչյուր մարդ գիտակցաբար կամ տարերայնորեն հենվում է այդ պատկերացումների վրա, սակայն կախված նրանից թե ինչպես է մարդը հասկանում բարոյական նորմերը ինչ բովանդակություն ունեն իր համար, որքանով է նա հաշվի առնում դրանք շփման մեջ նա կարող է թեթևացնել իր համար փոխգործունեությունը՝ դարձնելով այն առավել արդյունավետ կամ էլ դժվարացնել այն և նույնիսկ կոնֆլիկտային դարձնել: Էթիկայի նորմերը և վարքի կանոններն ունեն իրենց յուրահատկությունը կապված մարդկային գործունեության և շփման ոլորտների հետ:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի կոնֆլիկտների և ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել, ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամի, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական են դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. Սեփական ես-ի նշանակալիության կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում:
2. Դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության:
3. Ցացր կրթամակարդակ:
4. Աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ:
5. Կախվածություն ծնողների ընտանիքներից:

ՄԱՍ 3. Ընտանիքի ճգնաժամային Շրջանները

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:
2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդեցնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը:
3. Երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների տեսակետների բախումը:
4. Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:
5. Միայնակության զգացման փուլ. Այս շրջանը համարվում է 18-24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է էվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում մեծ ազդեցություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարիությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Գործոններն, որոնք ընտանիքում⁴ հանգեցնում են կոնֆլիկտի, թերի կլինեյին, եթե հաշվի չառնվեր մակրոգործոնները, այսինքն ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններն հատկապես՝ սոցիալական օտարման աճ, սպառողական պաշտպանմունքի կողմնորոշում, բարոյական արժեքների արժեզրկում, կնոջ ավանդակն դիրքի փոփոխություն հակադիր խնդիրների, կնոջ լիիրավ տնտեսական ինքնուրույնություն և տան տնտեսուհու համախտանիշը:

⁴ <https://pharutyunyanmskham.wordpress.com/>

Երեխան ոչ լիարժեք ընտանիքում

Հոգեբանները տարբերում են մի քանի տիպի ընտանիքներ: Գոյություն ունեն լիարժեք ընտանիքներ, բայց դեստրուկտիվ, որտեղ չկա համաձայնություն և տիրում են մշտական վեճեր: Ընտանիքում է դրվում երեխայի զարգացման հիմքը: Ներկայումս ծնող-երեխա փոխհարաբերությունների հիմնախնդիրը կրում է երկակի դրսևորում: Դժվար է պատկերացնել ներքին և արտաքին փաստերի այն քանակը, որոնք ազդում են աճող սերնդի վրա և ամեն անգամ փոխում նրա ներաշխարհը: Երեխայի դաստիարակությունը մեր կյանքի կարևոր մասն է կազմում: Սակայն հաճախ ընտանեկան կոնֆլիկտներն են դառնում պատճառ, որոնք ազդում են երեխայի հոգեբանության վրա, քանի որ մեծանում են ոչ լիարժեք ընտանիքում: Կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներում նյութական և կրթական անհրաժեշտությունը, նորմերի իմացությունն ի գործ չեն կանխելու պարբերաբար ծագող անախորժությունները: Ամուսինների միջև կոնֆլիկտների պատճառը կարող է լինել նաև դերաբաշխման մեջ. Հայրը ձգտում է ստանձնել ընտանիքի ղեկավարման դերը, իսկ մայրը պահանջում է փոխհամաձայնեցում, ըմբռնում: Ընտանիքի նման անբարենպաստությունը ներգործում է երեխայի ներհոգեկան զարգացման վաղ շրջանում: Ի վերջո, երեխայի մոտ մշակվում է նեգատիվ վերաբերմունք, ինչն էլ վկայում է նրանց միջև արդեն ստեղծվող պատնեշի մասին: Այնպիսի ընտանիքներում, որտեղ տիրում են կոնֆլիկտներ, ծնողների սոցիալ-հոգեբանական թերաձ, վերջինները զրկում են երեխային լիարժեք շփումից: Ընտանիքները, որտեղ պահպանվում են գուտ ֆորալ ամուսնական հարաբերություններ, նույնպես ազդում են երեխայի վրա և բերում են ներքին և արտաքին կոնֆլիկտի: Առավել դաժան և անմարդկային է սեփական երեխային որք դարձնելը: Առաժն ասում է, որ երեխան ընտանիքի հայելին է, նա տեսնում և սովորում է այն ամենը, ինչը տեղի է ունենում ընտանիքում: Երեխային շատ են անհրաժեշտ ծնողների ջերմ վերաբերմունքը, հոգատարությունը, խնամքը: Ընտանիքի փլուզումը բացասաբար է ազդում ոչ միայն ամուսինների հարաբերությունների, այլև իր հետքն է թողնում ծնող-երեխա հարաբերությունների վրա:

Երեխաներն ընտանիքում լրացումներ են, ամուսիններին կապող օղակ: Անկասկած, երեխային պետք են ծնողներ՝ հայր և մայր: Ընտանիքը⁵ միասնական օրգանիզմ է: Այսպիսով, պարզ է դառնում, որ ընտանեկան կոնֆլիկտներից տուժում են որ միայն ամուսինների հարաբերությունները, այլև երեխան(երը): Եվ կարևոր է հաշվի առնել մի կարևոր հանգամանք, որ երեխան գերզգայուն էակ է, որն ամեն ինչ զգում և հասկանում է:

⁵ <https://pharutyunyanmskham.wordpress.com/>

ՄԱՍ 4. Ընտանեկան կոնֆլիկտի տեսակները և դրանց հաղթահարելու լուծումները

Միջանձնային կոնֆլիկտ. Միջանձնային կոնֆլիկտը ընթանում է 2 կամ ավելի անձնաց միջև, որի ժամանակ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է պահպանել իր կարծիքը դիմում է փոխադարձ մեղանդրանքների, վիրավորանքների, ստորացումների և այլն: Նման վարքի կոնֆլիկտի սուբյեկտի մոտ առաջանում է բացասական հուզական ապրումներ, որոնք սրացնում են նրանց էքստրեմալ վարքի, քանի որ կոնֆլիկտի պայմաններում դժվարանում է հույզերի կառավարումը: Միջանձնային կոնֆլիկտը բացահայտում է մարդկանց միջև փոխհարաբերություններում համաձայնության բացակայությունը: Միջանձնային կոնֆլիկտ առաջանում է երբ միևնույն խնդրի հանդեպ դրսևորվում են հակադեմ կարծիքներ, հետաքրքրություններ, տեսակետներ, հայացքներ որոնք փոխհարաբերությունների համապատասխան փուլում խախտում են նորմալ փոխհարաբերությունները իր հերթին գիտակցում է, որ այդ գործողությունները սահմանափակում են իր հետաքրքրությունները և դիմում է պատասխան գործողությունների՝ առաջացնելով վեճ, որն էլ առաջացնում է կոնֆլիկտային իրավիճակ: Կոնֆլիկտի⁶ առաջացման համար անհրաժեշտ է առիթ, որը կակտիվացնի կողմերից մեկի գործողությունը: Որպես առիթ կարող են հանդես գալ երրորդ կողմի գործողությունները:

Միջանձնային կոնֆլիկտի սուբյեկտը մասնակիցներն են որոնք պնդում են իրենց սեփական հետաքրքրությունները, իսկ օբյեկտը այն է ինչի շուրջ հավակնում են մասնակիցները: Առանձնանում են միջանձնային կոնֆլիկտի հետևյալ վարքի ոճերը: Հակամարտություն, որը համառ ոչ փոխզիջումնային հարաբերություն է սեփական հետաքրքրությունների պնդում, ինչի համար օգտագործում են բոլոր հնարավոր միջոցները: Խուսափում: Սա կոնֆլիկտից հեռանալու, դրան մեծ նշանակություն չտալու

⁶ Բորդովսկայա Ռոզում «Психология педагогика»

փորձ է, որի պատճառ կարող է հանդիսանալ կոնֆլիկտի լուծման համար պայմանների անբավարարվածությունը: Հարմարում:

Սա սուբյեկտի պատրաստակամությունն է զիջելու իր հետաքրքրությունները: Հակառակ կողմերի համար ընդունելի լուծումների գտնումն է փոխադարձ զիջումների ճանապարհով: Համագործակցություն: Խնդրի լուծման համար կողմերի համատեղ գործողություն է: Նման դիրքորոշումը հնարավորություն է տալիս հասկանալ հակամարտության պատճառները և ելք գտնել ճգնաժամից, որոնք ընդունելի են հակամարտող կողմերի համար առանց նրանցից որևէ մեկի հետաքրքրությունների սահմանափակմանը: Միջանձնային կոնֆլիկտի գործառույթները որոշում են ըստ հետևանքների: Միջանձնային կոնֆլիկտի դինամիկան բացի ընդհանուր զարգացման օրինաչափությունների նախակոնֆլիկտային, կոնֆլիկտային, հետկոնֆլիկտային շրջանները, որոնք դասակարգել են հոգեբան Դանիել Դեման: Դրանք են՝ ընդհանրումներ, փոքր անխորժություններ, որոնք հարաբերությունների համար վտանգ չեն ներկայացնում: Բախումներ, որի ժամանակ ընդհանրումները աստճանաբար հաճախակի են դառնում ընդարձակվում է վեճեռ առաջացնող պատճառների շրջանակը: Առանձնացնում ենք կոնֆլիկտի հետևյալ գործառույթները՝ կոնստրուկտիվ և դեստրուկտիվ:

Կոնստրուկտիվ գործառույթներ են ճանաչողական, զարգացման, ինստումենտալ, վերակառուցողական: Կոնֆլիկտի դեստրուկտիվ գործառույթներն են՝ առկա համատեղ գործունեության քայքայումը, հարաբերությունների վատթարացումը: Այստեղ մասնակիցների հուզական անկայունությունը, հասնում է այն աստիճանի, որ առաջանում է ֆիզիկական բռնության վտանգ:

Անձի առանձնահատկությունները որպես միջանձնային կոնֆլիկտի գործոն- Միջանձնային կոնֆլիկտների ինչպես առաջացման այնպես էլ լուծման գործում կարևոր է անձի առանձնահատկությունների հաշվի առնելը ինչը դրսևորում է խառնվածքում, բնավորությունում: Այն էական ազդեցություն ունի միջանձնային հարաբերություններում մարդու վարքի վրա: Օրինակ խոլերիկին հեշտ է ներգրավել կոնֆլիկտի մեջ ի տարբերություն ֆլեգմատիկի: Անձնային զարգացման մակարդակում

չնայած նրան, որ կոնֆլիկտների առաջացման և լուծման մեջ խառնվածքը ու բնավորությունը նշանակալից ազդեցություն մարդկանց վարքի մոտիվացիայի վրա, անձնային զարգացման մակարդակը ևս մի կարևոր գործոն է, որն ազդում է միջանձնային կոնֆլիկտների առանձնացման վրա: Այստեղ խոսքը գնում է Ես-ի մասին: Ես-կոնցեպցիան պատկերացնում է ոչ միայն նրա մասին, թե ինչպիսիք ենք մենք, այլև նրա, թե ինչպիսիք ենք մենք ցանկանում լինել: Ես-կոնցեպցիայի ստեղծման այս ընթացքը տեղի է ունենում ողջ կյանքի ընթացքում: Ես-կոնցեպցիան հասկանալու անհրաժեշտությունը կայանում է նրանում, միջանձնային հարաբերություններում մարդիկ միշտ չէ, որ աղեկվատ են հանդես գալիս առկա իրավիճակին, նրանց տեսնում իրենք իրենց: Մարդու ինքնագնահատականը⁷ արտահայտված էս-կոնցեպցիայում, կարող է լինել աղեկվատ, բարձրացված նաև յուրաքանչյուր մարդու պահանջների մակարդակը՝ աղեկվատ, բարձրացված և ցածրացված: Աղեկվատ ինքնագնահատականի և աղեկվատ պահանջների դեպքում մարդիկ մյուս մարդկանց հետ փոխազդելիս ունեն ավելի շատ հաջողություններ և քիչ կոնֆլիկտային իրավիճակներ: Բարձր ինքնագնահատականի դեպքում մարդը, որը նպատակադրված ընդգծում է ուրիշների նկատմամբ իր գերակայությունը: Նման մարդիկ պոտենցիալ կոնֆլիկտային են՝ ցածր ինքնագնահատականով: Նման մարդու մոտ ձևավորվում է անլիարժեքության բարդույթ, անինքնուրույնություն, մյուսներից կախվածություն:

⁷ Բորդովսկայա Ռոզում «Психология педагогика

Ինչպես լուծել խնդիրը

Ամուսինների միջև կոնֆլիկտների լուծման կառուցողական բնույթը կախված է նախևառաջ այն բանից, թե արդյոք նրանց միջև գերակշռում է փոխըմբռնումը, արդյոք նրանք համատեղ կյանքի մեջ են առաջնորդվում այնպիսի պահվածքով, որը հիմնված է ներելու և զիջելու կարողության վրա: Ի վերջո, հաղթանակը դժվար թե համարվի անձնական նվաճում, եթե այն ձեռք բերվում սիրելիի պարտության կամ վրդովմունքի միջոցով: Ցանկացած կոնֆլիկտի մեջ պետք է հիշել, որ դիմացինը արժանի է հարգանքի: Ինչպե՞ս խուսափել ամուսինների միջև ընտանեկան բախումներից: Պետք է հասկանալ, որ կոնֆլիկտները ընտանեկան կյանքի նույնքան բաղկացուցիչ մասն են, որքան շփումը, կյանքը, ժամանցը: Հետևաբար չպետք է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, այլ փորձել կառուցողականորեն լուծել: Երբ վեճեր են ծագում, պետք է կառուցողականորեն երկխոսություն պահպանվի հիմնավորված փաստերի օգտագործմամբ՝ առանց պնդումների, ընդհանրացման: Անհրաժեշտ չէ արտաքին կամ ընտանիքի անդամներին ներքաշել կոնֆլիկտի մեջ, եթե դրանք ուղղակիորեն կապված չեն դրանց հետ: Եթե դիմացինը վատ տրամադրության մեջ է, ապա երկրորդը պետք է օգնի նրան ազատել իր ճնշված հոգեկան վիճակից: Չպետք է ստեղծել պատրանքներ, փոխարենը պետք է գնահատել փոքր բաները: Սովորեք ներել և մոռանալ վիրավորանքները, լինել ավելի հանդուրժող միմյանց նկատմամբ:

Մի պարտադրեք ձեր սեփական պահանջները: Խուսափել ընտանեկան կոնֆլիկտից բացարձակապես հնարավոր չէ, քանի որ փորձագետների կարծիքով կոնֆլիկտի խնդիրը ծագում է ընտանիքների 85%-ում, մնացած 15%-ում՝ պարբերաբար վիճաբանություն են ունենումն ընտանիքի անդամները: Եթե ուզում եք, որ ձեր ընտանիքում տիրի համերաշխություն ապա պետք է հետևել այս խորհուրդներին.

- Ընդունիր ընտանիքդ, որպես նվեր Աստծուց – Չէ որ եթե Աստված տալիս է մեզ ընտանիք չի անելու մեր փոխարեն ոչ մի բան, այլ փոխարենը ընտանիքում անդամներից յուրաքանչյուրը պետք է անի ամեն բան, որ հասնեն ընտանեկան խաղաղության: Միրել ընտանիքը նշանակում է կյանքն ապրել այնպես, որ քո ամեն քայլը բիսի ընտանիքիդ ամեն անդամի շահերից:

- Տուր առանց սպասելու- Ընտանիքի համար արվող նույնիսկ ամենաչնչին բանը պետք է լինի առանց փոխադարձ ակնկալիքի և սպասելիքների:
- Հնազանդ եղիր - Կինը պետք է փորձի ամեն ինչ անել որպեսզի տղամարդը հնարավորինս քիչ առիթ ունենա բացասական կարծիքներ ու տպավորություններ ունենալու:
- Պատասխանատու եղիր - Հիշեք, որ ընտանիք կազմելով ստանձնում ենք մեծ պատասխանատվություն ոչ միայն սեփական անձի հանդեպ այլ նաև ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար:
- Չպետք է հիասթափվել – Պետք է հիշել որ ընտանիքում բացարձակապես հնարավոր է ամեն ինչ՝ խոսակցություններ, անելանելի իրավիճակներ, վեճեր ու խոսակցություններ, այդուհանդերձ պետք է լինել լավատես և հիշել, որ ցանկացած իրավիճակում ելք կգտնվի:

Եզրակացություն

Վերլուծելով <<Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ>> թեման կարելի է հանգել այն եզրակացություններին, որ

- Հնարավորին չափ հարկավոր է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում
- Չպետք է մոռանալ այն, որ ցանկացած իրավիճակում հնարավոր է ելք գտնել
- Չպետք է կայացնել որոշումներ այն պահին, երբ գտնվում ենք ագրեսիվ վիճակում, քանի որ այս պարագայում հնարավոր է ավելի բարդացնել ստեղծված իրավիճակը
- Յուրաքանչյուր հարցի, որը առնչվում է ընտանիքի հետ պետք է մոտենալ մեծ պատասխանատվությամբ
- Սովորեք ներել և մոռանալ վիրավորանքները, լինել ավելի հանդուրժող միմյանց նկատմամբ
- Երբ վեճեր են ծագում, պետք է կառուցողականորեն երկխոսություն պահպանվի հիմնավորված փաստերի օգտագործմամբ՝ առանց պնդումների, ընդհանրացման
- Կոնֆլիկտի առհասարակ լուծումներ չկան, կան՝ փոխակերպումներ
- Կանաչի տիպը ընդհանրապես չի մրցակցում և ընտրում է վարքի հարմար ռազմավարությունը և ցածր է համագործակցության ռազմավարությունը, ունի կոնֆլիկտակայունության ցածր մակարդակ
- Արական տիպը համագործակցող է և խուսափում է կոնֆլիկտից
- Անդրոգեն տիպը ընտրում է վարքի փոխզիջում, ռազմավարությունը ունի կոնֆլիկտակայունության միջին մակարդակ
- Պետք է հիշել, որ ցանկացած կոնֆլիկտ պատճառում է հոգեբանական ծանր դրություն
- Եթե ընտանիքում կա երեխա կամ երեխաներ տուժում են ավելի շատ նրանք քանի որ նրանք չեն հանդուրժում ծնողների ստեղծած կոնֆլիկտային մթնոլորտը
- Այսպիսով, պետք է հասկանալ, որ կոնֆլիկտի լուծման հարցում չկան հաղթողներ և պարտվողներ, այն պայքարի մի ձև է՝ հասնելու ցանկալի արդյունքի և ի վերջո խաղաղության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երեւան 2010 456 էջ
2. Շնեյդեր, Ընտանիքի հոգեբանություն 1999
3. Ռեւան , Բորդովսկայա Ռոզում «Психология педагогика»>
4. Ղույումշյան Գ.Ե. Մանկավարժություն
5. Վիքիպեդիա
6. Բրիտանիկա
7. Վ. Խ. Միրզոյան 2014 «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
8. <https://pharutyunyanmskham.wordpress.com/>
9. <https://hy.wikipedia.org/>